բայց ժամ կամք բաժանորդ գրուելով Աբարատայ՝ կ՚քաջալերէ զմիաբանութիւնս, որպէս զի՝ ի փառս համազգական Աթոռոյս և ի պարծանս նոյն իսկ ազգին՝ ամենքս ևս միօրինակ ջանիւք գործակից լինիմք նորընծայ ամսագրիս յարատև շարունակութեանը և կենցաղօգուտ գիտելեաց յօդուածոց հետզհետէ տպագրութեանը, որով Աբարատ ամսագիրը իւրաքանչիւրս համեմատ արարատեան մերձակայ և հեռաւոր զաւակաց կարող կլինի աւելի սիրելի և օգտաւէտ ընել իւր թերթերը։

Ուստի՝ մեր աղնուամիտ բաժանորդաց ներողամտութիւնը կ՚խնդրեմք թէ մինչև հիմայ տպագրութեան տարից անվայելչութեան համարև թէ ոմանց ամսաթերթիս անկանոնաբար ուշ հասնելուն. վասն զի այս պակասութիւնը ոչ թէ խմբագրատան կողմանէ անհոգութեամբ յառաջացած էր, այլ թղթատանց արգելքները և քանի մի քաղաքաց բաժանորդաց անուանական ցուցակաց ուշ հասնելը մեր ձեռքը տպագիսի ակամայ յետաձգութեան պատճառ եղաւ, ևս և տպարանի քանի մի հարկաւոր պարագայից և նիւթոց պակասութիւնք ստիպեցին զմեզ յետաձգել այսպէս տեղեկութիւնքերի ամսաթերթը. վասն զի ինչպէս յայտնի է ամենուն, Ալշիրաձինը հեռի լինելով Ռուսաստանի վաճառաշահ քաղաքներէն, բնականաբար ամիսներ կ՚անցնին մինչև որ հարկաւոր նիւթերը մեր ձեռքը հասնելով կ՚սկսին՝ ի գործ դրուիլ։

Այժմ երախտագէտ սրտիւ կ՚յայտնեմք ընդ ամին մեր շնորհակալութիւն՝ ի դիմաց սրբոյ Աթոռոյս, բարեծնունդ Աղգասէրդ. Արկրտիչ Անասարեանցինոր նուիրեց Ա. Աթոռոյս տպարանին ինչպէս վաղուց խոստացած էր, Ա. Եհափառ հայրապետին յորդորանացը համեմատ՝ նոր բաձև և վայելուչ տառից մայրեր, զորս ժամանակին՝ ի գործ կ՚ածենք։

Նոյնպէս աղնուական Պ. Յ. Յովհաննեանցին կ՚մատուցանեմք մեր խորին շնորհակալութիւնը. որ՝ ի պէտս տպագրութեան Աբարատայ նուիրեց հարիւր քսան տոգ ազնիւ թուղթ երեք տեսակ մեծ, միջակ և փոքր թերթք։ Այն անձը ըստ իւր ջերմեռանդութեան սրտի առ սուրբ Աթոռս և ըստ ազգասիրութեանն սորանից առաջ նուիրած է Աթոռոյս տպարանին՝ ի յիշատակ իւր բարեպաշտութեան և մէկ նորաձոյլ տպագրական մամուլ Բրուսիոյ բերլին մայրաքաղաքը թափուած։

ԿԻՐՕՆԱԿԱՆ

ԿՆԴՆԴՀԱՏ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ազգաբերական յաջորդութեան Ուղղափառ Ս. Եկեղեցոյ Հայաստանեայց։

Որդ մեր այս գուշնաքեայ աշխատութեան ըստ մեծի մասին իւր լոյսը վերոյիշեալ թերթերէն քաղելէ զկնի, կը փութամ ասել՝ մեր Ա. Եկեղեցոյ հինգադիր առաքելոց՝ աշակերտաց և նոցին յաջորդաց ոմանց՝ որքան որ ցարդ

գտնել կարելի եղած է, անունները դասակարգելով, գլխաւորապէս՝ իմ այս յառաջակայ գրութեան շարժառիթ բուն նպատակիս համեմատ՝ Մատթէոս առաքեալէն սկսելով մինչև Ս. Լուսաւորիչը անյայտ յաջորդաց անունները ժամանակագրութեամբ դնելով և թիւը լրացնելով. նա և մինչև մեր օրերը (ց 1863) Գէորգ Դ. Կաթուղիկոսը՝ Ճիշդ Ս. Առաքելական յաջորդ Կաթուղիկոսաց և անունները յայտնելով. իմ և ամենասիրելի Ս. Գրգայնոց շատերուն անձուկը կ՝մատակարարեմ.

Նաև ասոնց վերջը կը ցանկամ յաւելու վերոյիշեալ թերթերուն ամենայն կերպով ճիշտ օրինակն (յայտնի է՝ ոչ թղթին և տառերուն ձևերուն) տպագրել տալով. որուն մէջը ամենևին ոչ բան մը աւելցնելով և ոչ կէտ մը պակսեցնելով՝ իմ հնութեանց վրայ ունեցած հաւատարմութիւնս ցցունելու կարծիքով ձեռք կամ գրիչ խառնած չեմ, միայն մի քանի բան ծանօթութիւններով յայտնած եմ, զոր իւրաքանչիւր Ս. Գրգինքս ինչպէս որ կ՝ախորժեն կամ ինչ կարծիքներով որ կընդունին. թող այնպէս յարգեն իրենց համար. ես միայն մեղի պէտք եղածը մէջէն քաղելով, և զայն իմ սիրելի և պատուական Ս. Գրգայնոց իբր ի նուէր հաղորդելով կ՝ուրախանամ և կը բաւականանամ. որ Հայ Ս. Գրգիս և Ս. Կերեցուցոյս՝ որով ինձ ալ ի հարկէ՝ քիչ պարծանք չէ.

Յամ. Տեառն	Ս. Առաքեալներ
30.	Մատթէոս.
32.	Մատդէոս (Հբ. ներքին).
33.	Սիմոն Կանանացի.
62.	Բարդողիմէոս.
66.	Յուդա Մատդէոս.
	Հբ. ներքին (աշակերտներուք)
52.	Ս. Գրիշէ.
60.	Սոսթէոս.
	Մատդէոսին Յ. Դեսիա յաջորդաց յայտնի եղած և գտնուած վերանիներուն անուանքը.
33.	Ադդէ աշկ. Մատդ. (Հբ. ներքին).
74.	Տուքիաս (Երրորդ եպիսկոպոս և յաջորդ զկնի Ադդէի).
110.	Բարսումա.
223.	Կոն՝ (Կոնոս կամ Կոդնատոս).
	Բարդուղիմէոսին՝ ի Սիւնիս ձեռնադրած և յաջորդ թողածներին յայտնի եղողներուն անուանքը.
67.	Կումնի աշկ. Բարդ. (Հբ. ներքին).
90.	Բաքեան.
155.	Մխիթար վանահայրկամ եպիս.
	Մատդէոսին Մրտուազ ձեռնադրած և յաջորդ թողածներին ցարդ յայտնի եղածներուն անուանքը.

(1) Վերոգրեալ պարբերութիւնը թէպէտ նախորդ օրուս, ամսոթերթին մէջ տպուած է, բայց որպիսի և նոյն պատմամբ փոփոխուած լինելուն. կրկին տպել հարկ եղաւ.

40. Զաքարիա աշխ. Իտալ. (հՔ ներէն)
71. Զենոնոս։
79. Արնեբսեհ։
94. Մուշէ կամ Մուշեղ։
124. Շահեն։
149. Շաւարշ։

Իտալիոսին աշակերտաց կամ որ նոյն է՝ յաջորդ եպիսկոպոսաց յայլ և այլ կողմանս յաջորդողներուն և կամ անոնցմէ ձեռնադրուողներէն գտնուած և յայտնի եղածներուն ոմանց անուանքը։

160. Զոթիկոս 'ի կողմանս Հայոց։
253. Գլակիոս 'ի Տիգրանակերտ։
254 Մեհրուժան 'ի մեծն Հայս։
285 Թանագինէս 'ի Սեբաստիա
254. Ս Լասիոս 'ի Սեբաստիա։

Իտալիոսին 'ի Կեսարիա ձեռնադրած և յաջորդ թողած Առաքելական ժառանգներուն ամբողջ դասակարգութիւնը մինչև Ս. Լուսաւորիչ։

41. Իմէոմիլոս Նիտիրքացի աշխ. Իտալ.
65. Երուանդ 'ի նահանգէն Գամրաց։
78. Սիքիանոս 'ի նահ. Կեսարիոյ։
109. Մեհրևան կամ Միհրանդ Եռացի
122. Աղրիկոս՝ Սեբաստացի։
149. Ս Լասիոս։
151. Ս Սահան։
161. Զբիանոս։
193. Մեհրուժան։
218. Պենտանոս։
227. Աղեքսանդր։
237. Բքեղայոս։
249. Պարմելիանոս կամ Փիրմելիանոս։
277. Կղեմէոս։
292. Ղեւոնդիոս։
302. Գրիգորիոս։ (1)

(Շարունակելի)

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Հանդէս օրհնութեան Արքալոյս իւղոյն Միւռոնի։

Աղգիս ընդհանուր հասարակութեանը արդէն յայտնի էր ընդ ամենայն տեղիս ժամանակ օրհնութեան սրբալոյս իւղոյն միւռոնի ամիսներով յառաջ։ ուստի և սուրբ խաչէն յառաջ Տաճկաստանէն մեծ բազմութիւն ուխտաւորաց հասան 'ի սուրբ Էջմիածին։

Այոցս հետ եկաւ նաև Բերիոյ վիճակին Առաջնորդ Արկրտիչ վարդապետն Տիգրանեան պատրիարգական թղթով, միշտ վիճակին վրա եպիսկոպոս ձեռնադրուելու։ որոյ համար Այդ վիճակի երևելի քաղաքներէն շատ Աղգայինք մահսերական նամակներով խնդրած էին Ս Եղիսիոս Կաթուղիկոսէն ոչ միայն

---

(1) Այս Գրիգորիոս Ա։ Լուսաւորչէն կ'սկսին յաջորդ հայրապետները «Փահանայապետ» «Եպիսկոպոս Եռ» և ընդհանրապէս «Կաթուղիկոս» տիտղոսները կրել փոխ «Պատրիարք» տիտղոսն ալ ներսէս մեծին օրէն կ'աւելնայ։